


Փոփոխությունների կրթական ուղի

COMPASS

Տարեկան հաշվետվություն




2015թ.

Մեր մասին

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ-ն (այսուհետ՝ Կենտրոն) հիմնադրվել է 2013թ. սեպտեմբերին, 2014թ. փետրվարին գրանցվել է որպես հասարակական կազմակերպություն: Կենտրոնը միավորում է տարբեր ոլորտներում գործունեություն ծավալող փորձագետների՝ դառնալով հետազոտական կարողությունները զարգացնելու, հմտությունները գործնականում կիրառելու յուրօրինակ միջավայր, ինչպես նաև հետազոտական, կրթական և խորհրդատվական ծրագրերի իրականացման հարթակ:

Կենտրոնի կառուցվածքը



Կենսաբույժի հիմնադիրները

- ✓ Ասատրյան Սարինե, մաթեմատիկոս
- ✓ Բոյաջյան Արտաշես, Էթնոաշխարհագետ, պատմական գիտությունների թեկնածու
- ✓ Գինեցյան Էլլեն, թարգմանիչ
- ✓ Հարությունյան Ղարիբ, տնտեսագետ, տնտեսագիտության թեկնածու
- ✓ Պետրոսյան Կարեն, տնտեսագետ, տնտեսագիտության թեկնածու
- ✓ Ռաֆայելյան Կարեն, տնտեսագետ

ՀԿ Խորհուրդ



ՂԱՐԻԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՀԿ ՆԱԽԱԳԱՀ

Ավարտել է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի «Ֆինանսներ և վարկ» բաժինը, ունի տնտեսագետի որակավորում: Հետբուհական կրթությունը շարունակել է ՀՀ ԳԱԱ Տնտեսագիտության ինստիտուտում՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: Աշխատել է Շիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոնի երիտասարդական բաժնի պատասխանատու, ապա՝ կառավարիչ: Հանդիսացել է «Գյումրու

ուսանողական խորհուրդ» ՀԿ փոխնախագահ, միջազգային ֆինանսավորմամբ տարբեր ծրագրերի ղեկավար: Ներկայումս աշխատում է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում՝ որպես դասախոս:



ԱՐՏԱՇԵՍ ԲՈՅԱԶՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու: Բուհն ավարտելուց հետո՝ 1992 թվականին աշխատանքի է անցել Շիրակի երկրագիտական թանգարանում՝ որպես գիտաշխատող, 1995թ-ից առ այսօր դասավանդում է Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտում: Հայաստանի աշխարհագրական ընկերության անդամ է:

Եղել է բուհի ուսանողական խորհրդի նախագահ, ԳՈԻԽ ՀԿ փոխնախագահ: Աշխատել է «Կամուրջ» ՈԻՎԿ-ում: Եղել է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի գիտական խորհրդի անդամ:

Կենտրոնի աշխատակազմ



ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ

Ավարտել է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի «Միջազգային տնտեսական հարաբերություններ» բաժինը՝ 2012 թվականին: Հետբուհական կրթությունը շարունակել է Հայաստանի Ամերիկյան համալսարանի՝ «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» բաժնում:

Աշխատել է Հայաստանի ամերիկյան համալսարանի «Թրփանջյան» գյուղական համայնքների զարգացման ծրագրի Գյումրու գրասենյակում՝ որպես վերապատրաստողի օգնական, ապա՝ «Քաունթերփարթ ինթերնեյշնլ»-ի հայաստանյան Գրասենյակում՝ որպես փորձնակ: 2007-2008թթ. մասնակցել է FLEX փոխանակման ծրագրին և սովորել ԱՄՆ-ում:



ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Ավարտել է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի «Ֆինանսներ» բաժինը՝ 2012 թվականին, նույն բուհում ստացել մագիստրոսի որակավորում: Եղել է ՀՊՏՀ ԳՄ Ուսանողական խորհրդի մամուլի հանձնաժողովի պատասխանատու, ԳՈԻԽ ՀԿ անդամ: Աշխատել է «Արտերիա» մշակութային-քննադատական ամսագրում և «168 Ժամ» լրատվական կայքում՝ որպես մարզային լրագրող: Ներկայում «Հինգշաբթի» շաբաթաթերթի

մշտական թղթակից է, Շիրակի թեմի Սբ Յոթ Վերք եկեղեցու «Բարեգործական ջոկատի» հանրային կապերի պատասխանատու:

Կենտրոնի նպատակները

- ❖ Նպաստել հասարակական կյանքի տարբեր ոլորտների զարգացման արդյունավետ քաղաքականությունների մշակմանը և իրականացմանը,
- ❖ Աջակցել քաղաքացիների իրավագիտակցության բարձրացմանը, քաղաքացիական հասարակության ու ժողովրդավարության զարգացմանը, տարբեր ոլորտներում կարողությունների զարգացմանը,
- ❖ Նպաստել երիտասարդության շրջանում գիտահետազոտական գործունեության տարածմանը և ընդլայնմանը

Կենտրոնի խնդիրները

- ❖ Իրականացնել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սոցիալական, տնտեսական, ժողովրդագրական, մշակութային և հասարակական կյանքի այլ բնագավառների քաղաքականությունների հետազոտություններ, վերլուծություններ,
- ❖ Տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն քաղաքացիական հասարակության կառույցներին, տնտեսվարող սուբյեկտներին, ձեռնարկատերերին, գործարարներին և այլ կառույցների ու անհատների,
- ❖ Իրականացնել շահերի պաշտպանությանը միտված միջոցառումներ և ծրագրեր,
- ❖ Կազմակերպել մասնագիտական ուսուցումներ, դասընթացներ, ոչ ֆորմալ կրթության միջոցառումներ, գիտաժողովներ, կոնֆերանսներ, համագումարներ, կլոր սեղան-քննարկումներ, բանավեճեր և այլ կրթական, գիտական և դաստիարակչական միջոցառումներ՝ տարբեր թեմաների շուրջ:

Կենտրոնի արժեքները

- ❖ Անկախություն,
- ❖ Օբյեկտիվություն,
- ❖ Հրապարակայնություն,

- ❖ Թափանցիկություն,
- ❖ Արհեստավարժություն,
- ❖ Հետևողականություն
- ❖ Թիմային աշխատանք:

Կենտրոնի ռազմավարական ուղղությունները

- ❖ Համայնքի և տեղական ինքնակառավարման զարգացում,
- ❖ Սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական հետազոտություններ և շահերի պաշտպանություն,
- ❖ Ձեռներեցության զարգացում:

Իրականացված հետազոտություններ

2014թ. փետրվար-մարտ

Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման հնարավոր ազդեցությունները ՀՀ-ում

Հետազոտության արդյունքում առանձնացվել են այնպիսի ռիսկեր, ինչպիսիք են աղքատության մակարդակի ավելացումը, պետական բյուջեի ծախսային բեռի ավելացումը, միջոցների կուտակման և հետագա բաշխման մեխանիզմների անկատարությունը և ՀՀ-ից կապիտալի հնարավոր արտահոսքը: Ուսումնասիրվել է այն երկրների փորձը, որտեղ կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրումը հաջողություն է ունեցել, որտեղ բնակչության կենսամակարդակը բարձր է: Համաձայն հետազոտության եզրակացության՝ մեր երկրում



համակարգի ներդրումը ժամանակավորեպ է, քանի որ չկա վերոնշյալ ռիսկերի գնահատման որևէ ուսումնասիրություն:

2014թ. օգոստոս-դեկտեմբեր
«Գյումրիում գործող համատիրությունների գործունեության հետազոտություն»

Հետազոտության արդյունքում առանձնացվել են մի շարք խնդիրներ, որոնց շարքում են համատիրությունների գործունեությունը կարգավորող օրենքների կենսունակության և կիրառելիության պակասը, միաժամանակ երկու օրենքների առկայությամբ պայմանավորված անհամաձայնություններն ու անհամապատասխանությունները, օրենքներում առկա բացթողումները և խնդրահարույց հոդվածները, երկու օրենքներում համատիրությունների բյուջեի կազմման ժամանակ աշխատավարձի և վարչական այլ ծախսերի հետ կապված սահմանափակումների բացակայությունը: Համատիրությունների գործունեության ոլորտի ուսումնասիրությունը տարբեր երկրների օրինակով ցույց է տվել, որ զարգացող և զարգացած երկրներում առկա է ոլորտի կանոնակարգման ու զարգացման մեծ փորձառություն, որի մեծ մասի կիրառությունը կարող է արդյունավետ լինել ՀՀ համատիրությունների ոլորտում՝ հաշվի առնելով տեղական առանձնահատկությունները: Կատարվել են համատիրությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություններ, մշակվել է գործունեության համաթիվ-գնահատական, որը կիրառվել է գործող համատիրությունների գործունեության արդյունավետության գնահատման նպատակով:



Հետազոտության արդյունքներից ելնելով՝ կատարվել են նաև մի շարք առաջարկություններ՝ Գյումրու համատիրությունների գործունեության բաերալավման ուղղությամբ:

2014թ. նոյեմբեր

Դրամի արժեզրկում. Հնարավորություն, թե՛ մարտահրավեր

Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են դրամի արժեզրկման դրական և բացասական հետևանքները, դրա հնարավոր ազդեցությունը ՀՀ տնտեսության, բնակչության գնողունակության, գնաճի և այլ ցուցանիշների վրա: Ուսումնասիրվել են ՀՀ վճարային հաշվեկշռի վիճակը՝ պետական պարտքի սպասարկումը, տրանսֆերտները, օտարերկրյա ներդրումները, սպեկուլյատիվ գործունեությունը և սեզոնայնությունը: Վերլուծության է ենթարկվել փոխարժեքի տատանման հնարավոր կապը պետական պարտքի սպասարկման հետ կապված վճարումների ժամանակ արտարժույթի նկատմամբ պահանջարկի փոփոխության, ինչպես նաև ուսումնասիրվել է օտարերկրյա ուղղակի ներդրումների ու պորտֆելային ներդրումների կազմն ու կառուցվածքը:



2014թ. նոյեմբեր-դեկտեմբեր

ՀՀ Շիրակի մարզի Բավրա, Աշոցք և Յոդամարգ համայնքների 2013-2014թթ. բյուջեների հետազոտություն

Հետազոտության արդյունքում պարզվել էր, որ ՀՀ գյուղական համայնքների մեծ մասում և ուսումնասիրվող համայնքների բյուջեներում առկա է ֆոնդային մասում և եկամուտների ու ծախսերի արդյունավետ պլանավորման խնդիր: Ցուցանիշների վերլուծությունը վկայում է, որ համայնքների բյուջեներում դեռևս բարձր տեսակարար կշիռ են կազմում պետական բյուջեից ստացվող պաշտոնական տրանսֆերտները՝ համահարթեցման նպատակով հատկացվող դոտացիաները, ինչը նվազեցնում է տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնությունը: Հետազոտության շրջանակներում

«Թրեյնինգ ակումբի» հետ իրականացնում է «10-ից 10» ուսուցողական ծրագիրը, որի շրջանակներում կազմակերպվել են 8 դասընթաց-հանդիպումներ՝ երիտասարդների, ուսանողների և այլ շահագրգիռ անձանց մասնակցությամբ: «10-ից 10» ծրագիրն, ըստ էության, հնարավորություն է տալիս յուրաքանչյուրին ստանալ արդիական կրթություն հանրապետությունում իրենց ոլորտներում հայտնի ուսուցանողների կողմից: Հիմնվելով անցկացված հարցումների վրա՝ դասընթացներն անցկացվել են ըստ մասնակիցների ուսուցողական կարիքների: Անցկացված դասընթացների թեմաներն են «3D գրաֆիկա», «Ինքնաճանաչողություն և սեփական կարողությունների բացահայտում», «Ֆոտոլրագրության հիմունքներ», «Կարիերա սկսելու/զարգացման գործիքներ/ռեզյումեի, ուղեկցող նամակի կազմում և հաջող հարցազրույցի գաղտնիքներ. Հեռավար ուսուցում. անվճար ուսուցման ազատ հարթակներ», «Խոսքի արվեստ», «Երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրներ», «Առողջ ապրելակերպ», «Առաջնորդություն և թիմային աշխատանք»:

2014թ. սեպտեմբեր-դեկտեմբեր

Իրազեկ քաղաքացին համատեք է

Ծրագրի շրջանակներում բնակչության շրջանում կատարված սոցիալական և համատիրությունների ղեկավարների հետ հարցազրույցների արդյունքում ձեռք է բերվել հավաստի տեղեկատվություն Գյումրում գործող համատիրությունների ներկա իրավիճակի վերաբերյալ, ինչպես նաև վեր են հանվել գործունեության դրական կողմերը, խոչընդոտները, կատարվել են ոլորտի բարելավման մի շարք առաջարկներ բնակիչների, համատիրությունների ղեկավարների կողմից: Օրենսդրական դաշտի մանրակրկիտ վերլուծության շնորհիվ առանձնացվել է այն կարևոր տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է իմանալ համատիրության ցանկացած անդամի, ղեկավարի, կատարվել են օրենսդրության բարելավման առաջարկներ: Իսկ միջազգային փորձի վերլուծության արդյունքում առանձնացված տեղեկատվությունը հնարավորություն է տվել կատարել համեմատություն և այլ երկրների հետ համադրելով՝ առաջարկել Գյումրիում համատիրությունների գործունեության



բարելավման ուղիներ: Համատիրությունների գործունեության վերաբերյալ տնտեսագիտական վերլուծությունը հնարավորություն է տվել ստանալ համատիրությունների գործունեության ֆինանսատնտեսական գնահատականներ ու կատարել իրատեսական առաջարկներ, որոնց կիրառումը կավելացնի համատիրությունների գործունեության արդյունավետությունը:

Ծրագրի արդյունքում բազմաբնակարան շենքերի բազմաթիվ բնակիչներ ստացած բուկլետների շնորհիվ տեղեկացվել են իրենց իրավունքների, պարտականությունների մասին, ինչը կբարձրացնի նրանց հետևողականությունը համատիրությունների գործունեության նկատմամբ: Վերջինս էլ կնպաստի համատիրությունների էլ ավելի նպատակային, արդյունավետ ու թափանցիկ աշխատանքին՝ հնարավորինս կատարելով օրենքով իրենց վերապահված լիազորությունները:

Ծրագրի իրականացմանն աջակցել են Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի Շիրակի տարածաշրջանային մասնաճյուղը և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղը:

2014թ. նոյեմբեր

Կանանց ձեռներեցության զարգացման դասընթացներ

Կանանց ձեռներեցության զարգացման դասընթացներն անցկացվել են ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում: Մասնակցել են 15 աղջիկներ և կանայք, այդ թվում՝ ուսանողներ, գործազուրկներ և աշխատողներ: Դասընթացի մասնակիցներին հաղորդվել են բազային գիտելիքներ բիզնես գաղափարի մշակման և ձևակերպման, բիզնեսի նախնական պլանավորման և մոդելավորման մասին՝ հաշվի առնելով կանանց ձեռներեցության առանձնահատկությունները: Դասընթացների ժամանակ իրականացվել են նաև գործնական աշխատանքներ, մասնակիցները երկու թիմերով ներկայացրել են իրենց բիզնես մոդելները: Ավարտին տեղի է ունեցել հանդիպում գյումրեցի կին ձեռներեցների հետ:

Ծրագրի իրականացմանն աջակցել է Հայաստանի գործատուների հանրապետական միությունը:



2014թ. նոյեմբեր-դեկտեմբեր

Հիմնիր քո ստարտափը՝ գաղափարից դեպի մեծ բիզնես. քայլ առաջին

«Հիմնիր քո ստարտափը՝ գաղափարից դեպի մեծ բիզնես. քայլ առաջին» ծրագրի նպատակն էր նպաստել ՀՀ Շիրակի մարզի գյուղական համայնքներում բնակվող շուրջ 30 երիտասարդների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը՝ ձեռնարկատիրական հմտությունների և գիտելիքների տրամադրման ու զարգացման միջոցով: Ծրագրին մասնակցելու հնարավորություն են ստացել 18-35 տարեկան 30 երիտասարդներ: Դասընթացի թեմատիկ պլանը ներառում էր մարքեթինգին, ֆինանսական պլանավորմանը, բիզնեսի կառավարմանը, հաշվապահությանը վերաբերող և այլ թեմաներ:

Ծրագրի եզրափակիչ փուլում հայտարարվել է գործարար առաջարկների մրցույթ, և մասնակից երիտասարդները ներկայացրել են իրենց կողմից մշակված գործարար ծրագիր-առաջարկները: Ծրագրի արդյունքում մասնակիցները ներկայացրել են 23 ծրագիր-առաջարկ: Որոշ մասնակիցներ իրենց առաջարկները ներկայացրել են թիմերով: Ընտրող հանձնաժողովը ընտրել է լավագույն 3 գործարար ծրագրերը, որոնց մեջ մտնում էին օդապարհիկով տուրերի իրականացումը Հայաստանի տարածքում, 3D «Մկայայ»-ի և շարժական վարսավիրանոցի ստեղծումը:

Ծրագրի հաղթողներին և մնացած հետաքրքրված մասնակիցներին ծրագրի ավարտից հետո ՀԿ-ն տրամադրում է նաև խորհրդատվություն՝ գործարար գաղափարները կատարելագործելու և ֆինանսավորման աղբյուրներ գտնելու նպատակով:

Ծրագիրն իրականացվել է ՀՀ Նախագահի աշխատակազմի



կողմից տրամադրված դրամաշնորհի և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի աջակցությամբ:

2015թ. հունվար- մինչ այժմ

Մեր փողերը, տեղեկացված լինելու մեր իրավունքը. համայնքի վիզուալ բյուջե



2015թ. հունվարից սկսել է «Համայնքի վիզուալ բյուջե» ծրագրի իրականացումը, որի արդյունքում կստեղծվի ինտերակտիվ կայք, որում կարտացոլվեն Գյումրիի համայնքի բյուջեի մուտքերը և ելքերը համապատասխան մանրամասն նկարագրություններով: Գյումրին կլինի առաջին համայնքը, որի բյուջեն ներկայացված կլինի նմանատիպ կայքի միջոցով:

Ծրագրի նպատակն է քաղաքացիական հասարակության լայն շերտերի և քաղաքացիների շրջանում բարձրացնել Գյումրիի համայնքի բյուջեի վերաբերյալ իրազեկության մակարդակը, ինչպես նաև քաղաքացիների մասնակցությունը համայնքի բյուջետային որոշումների կայացմանը, նպաստել կարիքների վրա հիմնված ավելի թափանցիկ բյուջետային արդյունավետ քաղաքականության մշակմանն ու իրականացմանը Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված ֆինանսական որոշումների մասին իրազեկվածության բարձրացման, բյուջետային գործընթացներին բնակիչների կողմից իմաստավոր և տեղեկացված մասնակցության ապահովման, փորձագիտական խորհրդատվության տրամադրման միջոցով:



Գյումրու քաղաքապետարանը ՀԿ-ի հետ հանդիպման արդյունքում ներկայացրել է իր պատրաստակամությունը կայքի ստեղծմանը նպաստելու և տվյալները տրամադրելու գործում:

Ստեղծվելիք կայքում արտացոլված տվյալները թարմացվելու են եռամսյակային պարբերականությամբ: Այն հնարավորություն է ընձեռնելու Գյումրու բոլոր քաղաքացիներին հարցերով դիմել ոլորտի փորձագետներին, կատարել առաջարկություններ, որոնք ամփոփվելու և պարբերաբար ներկայացվելու են Գյումրու քաղաքապետին ու ավագանու անդամներին:

Ծրագիրն իրականացվում է «Բաց հասարակության հիմնադրամներ- Հայաստան»-ի և Հետազոտական կենտրոնների հիմնադրամի աջակցությամբ


Կենտրոնի աջակցությամբ իրականացված ծրագրեր

2014թ. հուլիս-մինչ այժմ Գյումրու կենցաղի անկյուն

2014թ. հուլիսից սկսած Գյումրիում իրականացվում է «Գյումրու կենցաղի անկյուն» ծրագիրը, որի նպատակն է խթանել Շիրակի մարզի, մասնավորապես, Գյումրի քաղաքի տուրիզմի և արհեստագործության ոլորտների զարգացումը՝ ստեղծելով միջավայր, ներգրավելով արհեստագործ-վարպետներին և զարգացնելով կիրառական արվեստը:

«Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարան» ՀՈԱԿ-ի նկուղային հատվածի մի մասում ավանդական արհեստներից կենտրոնացված են գորգագործությունը, կարպետագործությունը, խեցեգործությունը:

Ծրագրի շրջանակներում մինչև այժմ կազմակերպվել են վերոնշյալ արհեստների ուսուցումներ, որոնց մասնակցել են թվով 25 երիտասարդներ, կենցաղի տուն այցելել են շուրջ 300 զբոսաշրջիկներ ու այցելուներ: Նախատեսվում է շարունակել արհեստագործության ու ս ու լ գ ու մ ն ե ր ը և վարպետաց դասերը, ինչպես նաև նպաստավոր պայմաններ ստեղծել նոր գ ր ո ս ա շ ր ջ ի կ ն ե ր ի ա յ ց ե լ ու թ յ ու ն ն ե ր ի



կազմակերպման համար:

Ծրագիրը ֆինանսավորվել է «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի և Ռուսաստանում Նորվեգիայի դեսպանատան կողմից:

2014թ. սեպտեմբեր-դեկտեմբեր

«Միգրանտներին աջակցելու ծրագիր՝ աշխատաշուկայում վերաինտեգրվելու համար»

Եվրամիության կողմից ֆինանսավորվող և Ֆրանսիայի ներգաղթի և ինտեգրման գրասենյակի կողմից իրականացվող Թիրախային նախաձեռնությունն Հայաստանի համար ծրագրի շրջանակներում, Հայաստանի գործատուների հանրապետական միությունը (ՀԳՀՄ)՝ որպես սոցիալական գործընկեր կառույց, սկսել է աջակցություն տրամադրել ՀՀ վերադարձող միգրանտներին՝ նպաստելով նրանց աշխատաշուկայում վերաինտեգրվելու գործընթացին:

Ծիրակի մարզում ծրագրի իրականացման գործընկերն է «Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ-ն:

Համագործակցության շրջանակներում ուսուցում-վերապատրաստման միջոցով տրամադրվել է աջակցություն վերադարձած միգրանտներին, ովքեր մնալու են Հայաստանում, ձեռք են բերելու մասնագիտական գիտելիքներ և հմտություններ տնտեսության տարբեր ոլորտներում և դրանց շնորհիվ ունենալու աշխատանք և աշխատելու հնարավորություն հայրենիքում: Ելնելով ծրագրի պայմաններից՝ Ծիրակի մարզից ծրագրին մասնակցության համար ընտրվել են 3 մասնակիցներ, որոնք մասնակցել են կառույցագործության, վարսավիրության և հաշվապահության դասընթացների՝ ձեռք բերելով համապատասխան գիտելիքներ ու հմտություններ:

2014թ. նոյեմբեր

Ուսանողական-երիտասարդական շաբաթ

2014 թ. նոյեմբերի 10-17-ը ««Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ-ն, Ծիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոնի երիտասարդական բաժինը, Ծիրակի թեմի երիտասարդական կազմակերպությունը, Մբ Աստվածածին (Յոթ Վերք) եկեղեցու «Բարեգործական ջոկատ»-ը, ՀՊՏՀ ԳՄ ուսանողական




խորհուրդը, ԳՊՄԻ ուսանողական խորհուրդը, ԱՌՏ երիտասարդական, բնապահպանական և խորհրդատվական ՀԿ-ն իրականացրեցին «Ուսանողական-երիտասարդական շաբաթ» ծրագիրը: Ծրագրի նպատակն էր Երիտասարդների և ուսանողների միջազգային օրվա մասսայական նշումը Գյումրիում:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են Գյումրու ուսանողական-երիտասարդական կազմակերպությունների շնորհանդես-էքսպո, ֆորում, թատրոն, բնապահպանական և կրթական խնդիրների շուրջ, «Էրուդիտ տրիո» ինտելեկտուալ խաղի առաջնություն և այլ միջոցառումներ:

**2014թ. դեկտեմբեր-2015թ. մարտ
Dream ՏԻՄ**

Dream ՏԻՄ ծրագրի սկզբնական հատվածում 8 գյուղական համայնքներից հավաքագրվել են երիտասարդներ: Երիտասարդների համար կազմակերպվել է եռօրյա դասընթաց՝ համայնքային զարգացման ու ՏԻՄ բյուջեի վերաբերյալ թեմաներով: Դասընթացը վարել են Արտաշես Բոյաջյանը և Ղարիբ Հարությունյանը: Ծրագրի ընթացքում տրամադրվել է խորհրդատվություն: Ծրագրի իրականացման համար



վերջնական ընտրվել է 3 համայնք՝ Արևիկ, Ջաջուռ և Վահրամաբերդ: Ընտրված համայնքների գյուղապետարաններից վերցվել են համայնքի ավագանու կողմից հաստատված բյուջեները, որոնք փորձագետի խորհուրդներով համակարգվել ու մոդելավորվել են: Դրա հիման վրա մշակվել է ինֆոգրաֆիկ պաստառ, տպագրվել են նաև համայնքի բյուջեի վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ: Դրանք բաժանվել են գյուղացիներին, իսկ պաստառները տեղադրվել են գյուղի տեսանելի վայրերում: Գյուղերում բնակիչների հետ անցկացվել են քննարկումներ համայնքների բյուջեների վերաբերյալ:

Գործընկերներ և աջակիցներ

Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի Շիրակի տարածաշրջանային մասնաճյուղ, Բ ա ց Հ ա ս ա ր ա կ ու թ յ ա ն Հիմնադրամներ-Հայաստան,



Գյումրու տեխնոլոգիական կենտրոն,
Հայաստանի գործատուների հանրապետական միություն,
Հայաստանի երիտասարդական հիմնադրամ,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղ,
Հետազոտական կենտրոնների հիմնադրամ,
Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան,
ՇԵՄՄ հաշվապահական կենտրոն,
Շիրակի թեմի Սոցիալ-կրթական կենտրոն,
«Ջինիշյան» հիշատակի հիմնադրամ,
«Վերադարձ բիզնես կապեր» կազմակերպություն:

ՀԿ հանրային կապեր

Հիմնադրման օրվանից ի վեր Կենտրոնը մշտական կապ է պահպանում ԶԼՄ-ների հետ՝ լուսաբանելով և ներկայացնելով կատարված աշխատանքները, իրականացված ծրագրերը և հետազոտությունները՝ մամուլի ասուլիսների, հանրային քննարկումների և



ներկայացումների միջոցով: ՀԿ գործունեության ընթացքում Կենտրոնը համագործակցել է ինչպես տեղական, այնպես էլ երևանյան ԶԼՄ-ների հետ: Մեկ տարվա ընթացքում հայաստանյան մամուլն անդրադարձել է Կենտրոնի գործունեությանը 65 անգամ՝ տպագիր և էլեկտրոնային հոդվածների, ռեպորտաժների, թեմատիկ հարցազրույցների, հանրային քննարկումների և մամուլի ասուլիսների լուսաբանման միջոցով:

Կենտրոնի հանրային կապերի ուղղությունը սերտ կապեր է պահպանում տեղական ինքնակառավարման մարմինների, ԶԼՄ և ՀԿ ոլորտի ներկայացուցիչների հետ:

Հանրային կապերի թիմի կողմից պատրաստվել և հանրությանն է ներկայացվել «Կոմպասս» ՀԿ պաշտոնական կայքը՝ www.compass-center.org, ինչպես նաև Կենտրոնի ֆեյսբուքյան

էջը՝ www.facebook.com/pages/Compass-Research-Training-and-Consultancy-Center/661124677300768, որտեղ մշտական թարմացումների միջոցով արտացոլվում են իրականացված գործունեությունը, ընթացիկ ծրագրերը, հետազոտական աշխատանքները, ռեպորտաժները և հոդվածները:



ՆՈՐՈԹՅՈՒՆՆԵՐ



ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ - ՔՆՆԱՐԿՈՒՄ



ՄԱՍՈՒԼԻ
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ



ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ
«ԿՈՄՊԱՍՍ»
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

ՄԱՍՈՒԼԻ ՄԵՐ

